

Քաղաքականություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԷԴՎԱՐԴ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ «ԿՈՍԵՐՍԱՆՏ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻՆ

ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հարցազրույց է տվել «Կոմերսանտ» պարբերականի թղթակից Վլադիմիր Սոլովյովին, որում ներկայացրել է հայ-թուրքական արձանագրությունների ստորագրմանը և Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ բանակցությունների ներկայիս ընթացքի շուրջ իր դիրքորոշումը:

- Ցյուրիխում ստորագրվել են Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների վերսկսման արձանագրություններ: Արդյո՞ք դա նշանակում է վերջնական հաշտեցում երևանի և Անկարայի միջև:

- Հարաբերությունների նորմալացման գործընթացը սկսվել է Հայաստանի նախագահի նախաձեռնությամբ, ով անցած տարվա սեպտեմբերին Երևան է հրավիրել իր թուրք պաշտոնակցին՝ դիտելու Ֆուտբոլային հանդիպումը: Այդ պահից սկսվեցին բանակցությունները Հայաստանի և Թուրքիայի ԱԳ նախարարությունների միջև: Փետրվարին արձանագրությունների շուրջ բանակցություններն ավարտվեցին, իսկ ապրիլի 2-ին նախաստորագրվեցին: Օգոստոսի 31-ին Երևանը և Անկարան հայտարարեցին, որ վեց շաբաթվա ընթացքում խորհրդակցություններ կանցկացնեն, որպեսզի նախապատրաստեն արձանագրությունների ստորագրմանը և հետագա վավերացմանը:

- Ի՞նչ ժամկետներում կարող է տեղի ունենալ վավերացումը:

- Դա կախված է խորհրդարաններից: Հույսով ենք, որ խելամիտ ժամկետներում:

- Այս տարի մենք կարո՞ղ ենք ակաճատեղ լինել հայ-թուրքական սահմանի բացման:

- Ես ոչինչ չեմ բացառի: Դա կախված է այն հանգամանքից, թե ինչպես կողմերը կհետևեն պայմանավորվածություններին և կշարժվեն առաջ: Հայաստանը հարգում է պայմանավորվածությունները, որոնք ձեռք են բերվել այլ երկրների մասնակցությամբ:

- Վերջերս Քիշնևում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումներից հետո, խոսք գնաց Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հարցում առաջընթացի մասին: Կոնկրետ, ինչո՞ւմ է այն կայանում:

- Եթե հաշվի առնենք, որ դա արդեն յոթերորդ հանդիպումն էր երկու առաջնորդների միջև, ապա, դիմադիպ կա և այն դրական է: Նախագահները ներկայումս քննարկում են մարդիկ պատասխանի

սկզբունքները: Իսկ եթե ավելի կոնկրետ, նրանց ուշադրությունը սեռված է երկու սկզբունքի վրա: Մինսկի խմբի միջնորդությամբ կողմերը փորձում են մոտեցնել դրանց շուրջ իրենց դիրքորոշումները:

- Ո՞ր սկզբունքներն են քննարկվում: Լաչինի միջանցքի լայնությունը: Ղարաբաղի կարգավիճակի հանրաքվե՞ն:

- Դուք մանրամասնում եք: Մի բան կարող եմ հստակ ասել. այսօր կողմերը կենտրոնացել են հիմնական հարցի քննարկման վրա՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի:


- Հաճախ կողմերը չեն ցանկանում մանրամասնել, եթե ոչ մի քայլով առաջընթաց չեն գրանցել:

- Եթե դրական դիմամիկա չլիներ, նախագահների յոթերորդ հանդիպումը չէր կայանա, և ոչ ոք չէր խոսի երկրների ղեկավարների նոր հանդիպմանը նախապատրաստվելու մասին: Մարդիկ փաստաթղթում շատ սկզբունքներ կան: Այսօր քննարկվում են դրանցից երկուսը: Եթե այդ երկուսի շուրջ պայմանավորվենք, ապա առաջ կընթանանք: Իսկ երբ պայմանավորվենք բոլոր սկզբունքների շուրջ՝ կսկսվի խաղաղության պայմանագրի նախապատրաստման աշխատանքը: Դա երկար և բարդ գործընթաց է:

- Ոչ այնքան վաղ անցյալում խոսում էին, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը առավել մոտ է կարգավորման: Քիշնևյան հանդիպումները թո՞ւյլ են տալիս նման եզրահանգման հանգել:

- Միգուցե, համեմատած այլ կոնֆլիկտների հետ, այն ավելի մոտ է կարգավորման, սակայն այդքան մոտ չէ, դժվարաբանում են պատասխանել: Երբ ասում են, որ դրական տեղաշարժ կա, ուրեմն այն կա: Կարևոր է Դմիտրի Մեդվեդևի դերը, որը հանդիպումներ է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հետ: Եվ բոլոր այդ հանդիպումները բավական արդյունավետ էին:

- Ինչ վերաբերում է հանդիպումներին, Քիշնևում դրանք երկուսն են եղել՝ մեկը Մինսկի խմբի հովանու ներքո, իսկ



երկրորդը՝ Դմիտրի Մեդվեդևի միջնորդությամբ: Դա ինչ է, մրցո՞ւմ է, թե ով ավելի շատ բան կանի կարգավորման համար՝ ԵԱՀԿ-ն, թե Ռուսաստանը:

- Առաջին հանդիպումը անց է կացվել ոչ թե Մինսկի խմբի հովանու ներքո, այլ նրա աջակցությամբ: Եվ Ռուսաստանը մտնում է այդ խմբի մեջ: Սակայն Մոսկվան կարևոր դերակատարություն ունի նաև նախագահների մակարդակով եռակողմ հանդիպումների կազմակերպման հարցում: Նման կարևոր հանդիպումներից մեկը եղել է անցած տարվա նոյեմբերին, և այդ ժամանակ ստորագրվեց Մայենդորֆյան հռչակագիրը: Դա առաջին անգամն էր, որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահներն իրենց ստորագրությունը դրեցին նույն փաստաթղթի տակ: Այդ փաստաթղթի տակ իր ստորագրությունը դրեց նաև ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևը:

- Այնուամենայնիվ, կարգավորման հարցում Մինսկի խմբի մասնակցությունը և Ռուսաստանի մասնակցությունը զուգահե՞ռ գործընթացներ են:

- Դա միմյանց լրացնող գործընթացներ են: Եթե Մինսկի խմբի համաձայնագրող երկրներից մեկը կարող է օգնել, ինչո՞ւ չանել դա: 2001 թվականին ակտիվ դերակատարում ուներ Ֆրանսիան՝ Ֆրանսիայի նախագահը: Այսօր կարգավորման հարցում ակտիվ դեր է կատարում Ռուսաստանը և նրա նախագահը:

- Ես այնպիսի տպավորություն ունեմ, որ Ղարաբաղյան բանակցությունները փակ են, ինչպես ոչ մի այլ բանակցություններ: Նման փակվածությունը օգնո՞ւմ է առաջ ընթանալ:

- Չեմ կարծում, որ այս բանակցությունները ավելի փակ են, քան մյուսները: Բազմաթիվ լուրջ բանակցություններ չեն վարվում մամուլ ասուլիսների կամ հարցազրույցների տեսքով: Մի օր գալիս է պահը, երբ դրանց պարունակությունը դառնում է հասանելի հանրությանը: Այդպես եղավ հայ-թուրքական բանակցությունների մասով: Եկավ պահ, որ մենք որոշեցինք, որ դրանք պետք է բաց լինեն՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Եվ դա տեղի ունեցավ դեռ մինչև ստորագրումը, ինչն ընդունված չէ: Սովորաբար համաձայնագրերը հրապարակվում են ստորագրումից հետո: Մենք փակվածության կողմնակից չենք, սակայն, ցանկացած բանակցություններ վերաբերում են ոչ թե մեկ, այլ երկու կամ ավելի կողմերին:

ГОРОСКОП НА НОЯБРЬ 2009 Г.

**Овен**  
В ноябре Овны будут загружены ответственными делами и потому сделаются чрезвычайно раздражительными. Важно держать себя в руках, когда речь идет о здоровье и жизни, например за рулём. В этот период хорошо делать прогнозы и строить планы на будущее. Мысли у Овнов будут невероятно ясны, а интуиция станет работать на запретельных скоростях.

**Телец**  
В бурлящем страстями ноябре Тельцы узнают о себе много нового. Своими взглядами не поделится только ленивый. Пережить такое будет непросто, зато Тельцы сумеют взглянуть на себя со стороны. То, что они увидят, им не очень понравится. Но от недостатков Тельцы избавляться умеют. Справятся и на этот раз.

**Близнецы**  
Тенденции октября переместятся и на конце осени. Близнецы продолжат победное шествие и смогут что-то радикально изменить в своей жизни, например поменять род занятий.

**Рак**  
В ноябре будут действовать тенденции предыдущего месяца. Блага, которые станут раздавать Ракам судьба, пойдут по нарастающей. Брюзжание злопыхателей покажется комариным писком.

**Лев**  
В ноябре Львам предстоит переосмотреть программу грядущих свершений и повыбрасывать несбыточные фантазии. Очень будет жалко блестящих проектов, поэтому действовать лучше решительно.

**Девы**  
В ноябре Девы будут жить спокойно и размеренно, стараясь поменьше бывать вне отапливаемых помещений. Заветные мечты в этот период не исполнятся, а вот повседневные планы – легко.

**Весы**  
В ноябре Весы вынуждены будут отойти на второй план и дать другим проявить себя. В этот период важно, не смотря ни на что, сохранять своё мнение по каждому ключевому вопросу и не сходить со своих позиций.

**Скорпион**  
В ноябре Скорпионы сумеют преобразиться и начать новую жизнь. Успешно пройдут все мероприятия, направленные на обновление. В профессиональном плане вероятны творческие успехи. Свой разрушительный темперамент Скорпионы в этом месяце смогут держать в узде.

**Стрелец**  
В ноябре дела Стрельцов приостановятся. Это время баланса, накопления энергии. Всё придёт в норму несколько позже. А пока следует плотно заняться планированием грядущих свершений. Каким-то образом следует оказать уважение начальству.

**Козерог**  
Ноябрь – время равновесия в жизни Козерогов. Желания будут полностью совпадать с возможностями. Козероги не захочется перемены, да они сейчас и не нужны. Есть хорошая работа, верные друзья и любимый человек. В ноябре лучше всего заняться укреплением дружеских связей и на время отказаться от революционных преобразований в профессиональной сфере.

**Водолей**  
В ноябре Водолеи получат заслуженную передышку. Работы будет не очень много, и значительную её часть возьмёт на себя коллега. Правда, и особых наград не последует, но Водолеи будут рады побыть немного в тени. Следует обратить внимание на некоего человека, который станет набиваться в друзья. Его намерения не совсем чисты.

**Рыбы**  
В ноябре Рыбы снова окажутся среди людей. Их часто станут приглашать на официальные мероприятия и дружеские вечеринки. На одном из этих раутов случится судьбоносная встреча. Следует сразу узнать данные и координаты этого человека. Записать и не потерять. Человечек этот Рыбам вскоре сильно понадобится, найти его без предварительной подготовки будет непросто.



ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՓՈԽՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ

րապես հայերին զգալիորեն փոխվել է. «Եթե նախկինում թուրքերի 70 տոկոսը դեմ էր Հայաստանի հետ շփումներին, ապա այժմ դեմ է արտահայտվում նրանց 35 տոկոսը. ընդ որում նկատելի է, որ այդ թիվը նվազելու միտում ունի», նկատեց բանախոսը:

Ինչ վերաբերում է մեր հասարակությանը, ապա. «Երևանում հազար հոգու մեջ անցկացրած մեր հարցումներով պարզ է դարձել, որ երևանցիների 52,4 տոկոսը դեմ է արձանագրությունների առկա բովանդակությանը, իսկ 40 տոկոսը՝ հայ-թուրքական սահմանի բացմանը ընդհանրապես, - ասաց սոցիոլոգը՝ շարունակելով, - պետք է փաստել, որ այս մոտեցումները միանշանակ չեն. ավելի շատ են մարդիկ, որոնք ոչ թե խոսում են սահմանը բացել-չբացելու, այլ՝ այս արձանագրություններով հարաբերությունների գնալու մասին, չնայած քիչ չեն նաև այնպիսիք, որոնք հոգեբանական բարդույթներ ունեն Թուրքիայի նկատմամբ»:

Պողոսյանը շեշտեց նաև, թե որքան դժվարությամբ են և՛ մեր, և՛ թուրքական իշխանություններն առաջ տանում արձանագրությունների վավերացման գործընթացը, նկատելով. «Ըստ իս, և՛ Հայաստանի, և՛ Թուրքիայի ղեկավարները բավարար չեն բացատրել հասարակությանը արձանագրությունների իսկությունը: Չնայած եղան բացատրություններ, սակայն դրանք ուշացած էին: Սփյուռքի պարագայում նույնպես, կարծում եմ, բավականին ուշացած քայլեր ձեռնարկվեցին»:

Բանախոսի վկայությամբ՝ մեր քաղաքացիներից շատերի համար դեռ պարզ չէ, թե ինչ ենք շահելու կամ զիջելու այս գործընթացից:

Ըստ նրա տվյալների՝ ամեն տարի Հայաստանից Թուրքիա աշխատելու, հանգստանալու են գնում 30-40 հազար հայեր, ընդ որում առանց խոչընդոտների:

Հայաստանի մամուլի ազգային ակումբում սոցիոլոգների ասոցիացիայի նախագահ Գևորգ Պողոսյանը ներկայացրեց իրենց անցկացրած հարցումները երևանցիների և թուրք հասարակության միջև՝ պարզելու նրանց վերաբերմունքը հայ-թուրքական հաշտեցման գործընթացին: Պարոն Պողոսյանը նկատեց, որ սեպտեմբերին անցկացված հարցումներով թուրքերի վերաբերմունքն արձանագրություններին և ընդհան-